

Հաստատված է

«Լիմիթվեա Բիթրնգ» ՍՊԸ միակ մասնակցի

2017 թվականի հունիսի 29-ի թիվ 290617/1 որոշմամբ

«ԼԻՄԻԹՎԵՍ» ՈՉ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ
ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ և ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) ներքին իրավական ակտ է և ընդունվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա:
2. Քանի որ «Լիմիթլես» ֆոնդը (այսուհետ՝ Ֆոնդ) իրավաբանական անձի կարգավիճակ չունի և չունի աշխատակիցներ, ապա Ֆոնդի անունից հաշվետվությունները տրամադրում է ֆոնդի կառավարումն իրականացնող «Լիմիթլես Բիթրնգ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կառավարիչ), իսկ ներքին դիտարկումների մարմնի գործառույթներն իրականացվում են կառավարչի աշխատակցի (այսուհետ՝ Ներքին դիտարկումների աշխատակից) կողմից:
3. Եթե այլ բան չի բխում Կանոնակարգի բովանդակությունից, ապա Կանոնակարգում օգտագործվող եզրույթներն ունեն Օրենքով սահմանված նշանակությունը:

Գլուխ 2. Լիազոր մարմնին հաշվետվությունների տրամադրման ընթացակարգը

4. Լիազոր մարմնին են տրամադրվում հաշվետվություններ հետևյալ գործարքների վերաբերյալ.
 - 1) անկանխիկ գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը (կամ արտարժույթով արտահայտված համարժեք գումարը), ինչպես նաև կանխիկի հետ կապված գործարքներ, որոնց գումարը գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը,
 - 2) կասկածելի գործարքները կամ գործարար հարաբերությունները անկախ գործարքի գումարից:
5. Կանոնակարգի 4-րդ կետով սահմանված հաշվետվությունները Լիազոր մարմնին են տրամադրվում ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2014թ. հոկտեմբերի 7-ի «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կորպորատիվ ներդրումային ֆոնդերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կառավարիչ չունեցող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 106 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 267-Ն որոշմամբ սահմանված կարգով, ժամկետներում և օրինակելի ձևով:

Գլուխ 3. Կասկածելի գործարքները կամ գործարար հարաբերությունները

6. Ներքին դիտարկումների աշխատակիցը գործարքը կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը պետք է որակի կասկածելի և Լիազոր մարմնին տրամադրի Կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն, եթե առկա են կասկածներ, որ
 - 1) գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով, կամ
 - 2) կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը

ֆինանսավորողների հետ, կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից, կամ

- 3) նույնականացման համար նախկինում ձեռք բերված տվյալների ճշգրտության և համարժեքության վերաբերյալ, այդ թվում՝ իրական շահառուների առկայության և նրանց մասին տվյալների իսկության հետ կապված, կամ
 - 4) առկա է հնարավոր համընկնում հաճախորդի կամ գործարքի մյուս կողմի տվյալների և ահաբեկչության հետ կապված անձանց կամ Լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների միջև:
7. Ներքին դիտարկումների աշխատակիցը պետք է դիտարկի գործարքը կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը կասկածելի որակելու հարցը այն դեպքում, երբ
- 1) իրավիճակը ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներին կամ տիպաբանություններին, կամ
 - 2) թեև կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիությունը չի բխում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներից կամ տիպաբանություններից, սակայն դրա կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքներ հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով:
8. Կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունների տրամադրման Կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերով սահմանված հիմքերից մեկի կամ մի քանիսի ի հայտ գալու դեպքում Ներքին դիտարկումների աշխատակիցը կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության հիմքը հայտնաբերելու օրը իրականացնում է համապատասխան գործարքի կամ գործարար հարաբերության վերլուծություն և պատրաստում է եզրակացություն:
9. Այն դեպքում, երբ Ներքին դիտարկումների աշխատակիցը կայացնում է գործարքը (գործարար հարաբերությունը) կասկածելի որակելու մասին որոշում, նա անմիջապես Լիազոր մարմնին տրամադրում է Կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված հաշվետվություն:
10. Կանոնակարգի 6-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքում, երբ առկա է հնարավոր համընկնում ահաբեկչության հետ կապված անձանց նույնականացման տվյալների հետ, Ներքին դիտարկումների աշխատակիցն անմիջապես իրականացնում է համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև դրական համընկնման բացակայության վերաբերյալ հավաստիանալու անհնարինության դեպքում կայացնում է Հաճախորդի միջոցների սառեցման մասին որոշում (առանց Հաճախորդին տեղյակ պահելու): Սառեցման մասին որոշում կայացվում է նաև Օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում:
11. Սառեցման մասին որոշումն ընդունելու պահից գործարքը կամ գործարար հարաբերությունն անմիջապես որակվում է կասկածելի և դրա վերաբերյալ հաշվետվություն է տրամադրվում Լիազոր մարմնին:

12. Այն դեպքում, երբ առկա է Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքը, ապա գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժվում է (Ներքին դիտարկումների աշխատակիցը կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության մասին տեղեկացրած կառավարչի աշխատակցին է ներկայացնում վերջինիս կողմից ներկայացված տեղեկացումը «Գործարքը մերժված է» գրառումով):
13. Լիազոր մարմնի կողմից ստեղծումը վերացնելու մասին որոշման դեպքում կառավարչի աշխատակիցը կարող է կատարել կասկածելի դիտարկված գործարքը (հաստատել գործարար հարաբերությունը):
14. Այն դեպքում, երբ սույն Կանոնակարգով նախատեսված կարգով Ներքին դիտարկումների աշխատակիցը կայացնում է գործարքը դադարեցնելու կամ միջոցները ստեղծելու վերաբերյալ որոշում, նա այդ մասին որոշումը կայացնելու օրը տեղեկացնում է կառավարչի գործադիր տնօրենին:

Գլուխ 4. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը

15. Կառավարիչը Հաճախորդի (նրա լիազորված անձի) հետ գործարար հարաբերության հաստատումը կամ Հաճախորդի հետ միանգամյա գործարքի կնքումն իրականացնում է Հաճախորդի նույնականացման համար Կանոնակարգով և Օրենքով նախատեսված տեղեկությունները և փաստաթղթերը ստանալուց և Հաճախորդի ինքնությունը ստուգելուց հետո: Կառավարիչը կարող է նույնականացման համար պահանջվող տեղեկությունների հիման վրա Հաճախորդի (լիազորված անձի) ինքնությունը ստուգել գործարար հարաբերություն հաստատելու կամ միանգամյա գործարք կատարելու ընթացքում կամ դրանից հետո յոթնօրյա ժամկետում:
16. Ֆոնդի կառավարիչը Հաճախորդների հետ մեկանգամյա գործարքներ կատարելիս կամ գործարար հարաբերություններ հաստատելիս, ինչպես նաև այն դեպքերում, երբ առաջանում են կասկածներ Հաճախորդի (լիազորված անձի) նույնականացմանը վերաբերող նախկինում ձեռք բերված տեղեկատվության հավաստիության կամ ամբողջականության կամ փողերի լվացման և/կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ, պարտավոր է իրականացնել Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության միջոցառումները, այդ թվում՝
 - 1) Հաճախորդի (այդ թվում՝ լիազորված անձի) նույնականացում և ինքնության ստուգում՝ նախքան գործարք կատարելը կամ գործարար հարաբերություն հաստատելը՝ բացառությամբ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի,
 - 2) Հաճախորդի իրական շահառուի պարզում, վերջինիս նույնականացում և ինքնության ստուգում,
 - 3) իրավաբանական անձ Հաճախորդի մասնակիցների և կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում,
 - 4) Հաճախորդի գործարար բնութագրի, գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի պարզում,
 - 5) գործարար հարաբերության ամբողջ ընթացքում ընթացիկ պատշաճ ուսումնասիրության իրականացում:
17. Կանոնակարգի 15-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված՝ Հաճախորդի, առկայության դեպքում՝ լիազորված անձի և իրական շահառուի նույնականացումը և ինքնության ստուգումը կատարվում է պետական մարմնի կողմից տրված

արժանահավատ և վավեր փաստաթղթերի և այլ տեղեկությունների հիման վրա: Մասնավորապես՝

- 1) ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ համար անձը հաստատող փաստաթղթի կամ բացառապես լուսանկարով՝ պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկությունները պետք է առնվազն ներառեն անձի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում), ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ նաև հաշվառման համարը և հարկ վճարողի հաշվառման համարը, Հաճախորդի բնակության վայրը,
 - 2) իրավաբանական անձի համար պետական գրանցման փաստաթղթի կամ պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկությունները պետք է առնվազն ներառեն իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն), գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը և, առկայության դեպքում, հարկ վճարողի հաշվառման համարը,
 - 3) պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի համար ձեռք բերվող տեղեկությունները պետք է առնվազն ներառեն պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի լրիվ պաշտոնական անվանումը և երկիրը:
- 18.** Կանոնակարգի 15-րդ կետի 1-ից 3-րդ ենթակետերով սահմանված միջոցառումները օտարերկրյա իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ինչպես նաև օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձանց դեպքում ընդգրկում է նաև անձի կենսական շահերի կենտրոնի վերաբերյալ տեղեկությունների ձեռք բերումը:
- 19.** Կանոնակարգի 15-րդ կետի 4-րդ ենթակետերով սահմանված Հաճախորդի գործարար բնութագիրը Հաճախորդի գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, լիազորված անձանց և իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի, ինչպես նաև Հաճախորդի գործունեությանը վերաբերող այլ փաստերի և հանգամանքների վերաբերյալ տեղեկությունների պարզումն է:
- 20.** Կանոնակարգի 15-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված միջոցառման իրականացման նպատակով Ներքին դիտարկումների աշխատակիցը իրականացնում է հետևյալ գործողությունները.
- 1) ստուգում է գործարքների միջև փոխադարձ կապը, բացահայտում է այդ կապի հնարավոր սխեմաները, ինչպես նաև որոշում է, թե ինչ նպատակ ունեն նշված գործարքները,
 - 2) ստուգում է, թե արդյո՞ք իրականացվող գործարքների էությունը համապատասխանում է Հաճախորդի կողմից իրականացվող գործունեության տեսակներին,
 - 3) հավաքագրում է Հաճախորդի եկամտի և ունեցվածքի աղբյուրների վերաբերյալ հնարավոր տեղեկություններ,
 - 4) համադրում է Հաճախորդի տարբեր գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը, ծավալները,

- 5) գնահատում է գործարքում (գործարար հարաբերությունում) առկա հնարավոր ռիսկերը՝ կասկածելի գործարքների (գործարար հարաբերությունների) հիմքերի և չափանիշների հետ համադրություն իրականացնելու դեպքում,
 - 6) ստուգում է, թե արդյո՞ք առկա են այնպիսի գործարար հարաբերություններ կամ միանգամյա գործարքներ, որոնցով Հաճախորդը նպատակ ունի խուսափել Լիազոր մարմնին հաշվետվություն տրամադրելուց,
 - 7) ճշտում է որոշակի միավոր ժամանակահատվածում գործարքների տեսակները, հաճախականությունը և ժամանակագրությունը,
 - 8) այլ գործողություններ, որոնք Ներքին դիտարկումների աշխատակցի կարծիքով անհրաժեշտ են Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը բավարար և ամբողջական իրականացնելու համար:
21. Այն դեպքերում, երբ հնարավոր չէ իրականացնել Կանոնակարգով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության միջոցառումները, գործարքը կամ գործարար հարաբերությունը մերժվում կամ դադարեցվում է և դիտարկվում է կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվության տրամադրման հարցը:

Գլուխ 5. Ռիսկերի վրա հիմնված մոտեցում

22. Նախքան Հաճախորդի հետ գործարք կատարելը կամ գործարար հարաբերություն հաստատելը, ըստ անհրաժեշտության նաև գործարքի կատարումից կամ գործարար հարաբերության հաստատումից հետո Հաճախորդը կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը դասակարգվում է ըստ ռիսկի հետևյալ չափանիշների՝
- 1) Բարձր ռիսկի չափանիշ,
 - 2) Միջին ռիսկի չափանիշ,
 - 3) Ցածր ռիսկի չափանիշ:
23. Ռիսկը գնահատվում է Բարձր, եթե առկա են հետևյալ չափանիշներից (անձինք, դեպքեր կամ օբյեկտներ) թեկուզ մեկը՝
- 1) քաղաքական ազդեցություն ունեցող անձ, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ հանդիսացող հնարավոր կամ առկա Հաճախորդը կամ իրական շահառուն,
 - 2) գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված իրավաբանական անձինք, որոնք գտնվում են այնպիսի երկրներում կամ տարածքներում, որտեղ (ՀՀ ԿԲ-ի կամ համապատասխան միջազգային կազմակերպությունների սահմանած ցանկերի համաձայն) չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները,
 - 3) բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքները, անսովոր պայմաններով գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն,
 - 4) գործարքում կամ գործարար հարաբերությունում այնպիսի իրավաբանական անձի կամ կազմավորման ներգրավվածությունը, որոնց գործունեության ոլորտը ակտիվների անհատական տնօրինումն է,
 - 5) գործարքում կամ գործարար հարաբերությունում այնպիսի ընկերության ներգրավվածությունը, որն ունի անվանատեր կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսեր,

- 6) գործարքում կամ գործարար հարաբերությունում այնպիսի ընկերության ներգրավվածությունը, որն ունի սեփականատերերի արտասովոր կամ անհարկի բարդ կազմ,
 - 7) այն դեպքերը, երբ առկա է կանխիկ դրամի լայնամասշտաբ կիրառությամբ բնութագրվող բիզնես կամ գործարար հարաբերություն:
 - 8) բարեգործական և շահույթ չհետապնդող կազմակերպությունները,
 - 9) այն դեպքերը, երբ առաջանում են նույնականացման համար նախկինում ձեռք բերված տվյալների ճշգրտության և համարժեքության վերաբերյալ կասկածներ, այդ թվում՝ իրական շահառուների առկայության և նրանց մասին տվյալների իսկության հետ կապված,
 - 10) առանց առերես շփման գործարքը կամ գործարար հարաբերությունը,
 - 11) Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի կողմից սահմանված այլ չափանիշներ:
24. Այն դեպքում, երբ կառավարչի աշխատակցի կարծիքով Հաճախորդը պետք է որակվի որպես Բարձր ռիսկի չափանիշների Հաճախորդ, նա այդ մասին անմիջապես տեղեկացնում է Ներքին դիտարկումների աշխատակցին, իսկ Ներքին դիտարկումների աշխատակցից պահանջ ստանալու դեպքում՝ նրան է տրամադրում այն տեղեկությունները, որոնք հիմք են հանդիսացել Հաճախորդին Բարձր ռիսկի չափանիշների Հաճախորդ դիտարկելու համար:
25. Առանց առերես շփման գործարար հարաբերություն հաստատելիս կառավարիչը Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում պահանջում է, որ առաջին վճարումը կատարվի այնպիսի ֆինանսական հաստատությունում Հաճախորդի անվամբ բացված հաշվով, որը
- 1) իրավասու է և կարող է ըստ պահանջի անմիջապես տրամադրել Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ձեռքբերված տեղեկությունները, ներառյալ փաստաթղթերի պատճենները,
 - 2) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից ենթակա պատշաճ կարգավորման ու վերահսկողության, ինչպես նաև ունի Օրենքով և Լիազոր մարմնի կողմից ընդունված իրավական ակտերով սահմանված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության և տեղեկությունների պահպանման արդյունավետ ընթացակարգեր,
 - 3) չի գտնվում այնպիսի տարածքում, որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները (Լիազոր մարմնի հրապարակած ցանկերին համապատասխան):
26. Բարձր ռիսկի չափանիշներ հայտնաբերելու դեպքում Ներքին դիտարկումների աշխատակիցը ձեռնարկում է Հաճախորդի հավելյալ ուսումնասիրության միջոցառումներ, այդ թվում
- 1) գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ Հաճախորդից պահանջվող տեղեկությունների և փաստաթղթերի իսկությունը և հավաստիությունը ստուգելիս պահանջում է անհրաժեշտ տեղեկություններ, կատարում է հարցումներ հնարավոր մեծ թվով իրավասու մարմիններից և այլ անձանցից
 - 2) Հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրի պարզում,

- 3) գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանների և նպատակի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում,
 - 4) քաղաքական ազդեցություն ունեցող անձանց դեպքում՝ ընթացիկ հավելյալ դիտարկում:
27. Ցածր ռիսկի չափանիշներն են՝
- 1) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները,
 - 2) պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, պետական ոչ առևտրային կազմակերպությունները, պետական կառավարչական հիմնարկները, բացառությամբ չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում գտնվող մարմինների կամ կազմակերպությունների:
28. Ցածր ռիսկի չափանիշներ հայտնաբերելու դեպքում ձեռնարկվում են Հաճախորդի պարզեցված ուսումնասիրության միջոցառումներ, մասնավորապես նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են հետևյալ տեղեկությունները
- 1) ֆիզիկական անձի համար՝ անուն, ազգանուն և անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
 - 2) իրավաբանական անձի համար՝ անվանումը և անհատականացման համարը (պետական գրանցման համար, հաշվառման համար և այլն),
 - 3) պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի համար՝ լրիվ պաշտոնական անվանումը:
29. Ռիսկը գնահատվում է միջին այն դեպքում, երբ բացակայում են բարձր կամ ցածր ռիսկի չափանիշները:

Գլուխ 6. Ներքին դիտարկումների գործառույթը

30. Ֆոնդի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործառույթները իրականացվում են Ներքին դիտարկումների աշխատակցի կողմից:
31. Ներքին դիտարկումների աշխատակիցը՝
- 1) մշակում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներքին իրավական ակտերը,
 - 2) իրականացնում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներքին իրավական ակտերի արդյունավետության մոնիտորինգը, առաջարկներ է ներկայացնում դրանց արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ,
 - 3) ապահովում է Ֆոնդի կապը Լիազոր մարմնի հետ,
 - 4) ապահովում է Ֆոնդի անունից Լիազոր մարմնին տեղեկացման ենթակա գործարքների վերաբերյալ հաշվետվությունների և այլ տեղեկությունների տրամադրումը,
 - 5) կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների բացահայտման նպատակով իրականացնում է վերլուծություններ և ուսումնասիրություններ,
 - 6) հետևում է գործարար հարաբերությունների ընթացիկ դիտանցմանը և պարբերաբար վերանայում է տեղեկությունների ճշգրտման և թարմացման ընթացքը,
 - 7) ապահովում է Ֆոնդի Հաճախորդների դասակարգումն ըստ ռիսկի աստիճանի,

- 8) կազմակերպում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտում ներքին ուսուցումը և վերապատրաստումը, իրականացնում է ուսուցման ծրագրերի ընթացքի և արդյունքների մոնիտորինգը,
 - 9) որոշում է կայացնում գործարքը կամ գործարար հարաբերությունը մերժելու, ահաբեկչության հետ կապված ֆինանսական միջոցները սառեցնելու վերաբերյալ,
 - 10) իրականացնում է տեղեկատվության հաշվառումը և տեղեկատվության պահպանման դիտանցումը,
 - 11) իրականացնում է ուսումնասիրություններ և այլն:
32. Ներքին դիտարկումների աշխատակիցը կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է Ֆոնդի գործունեության համապատասխանությունը Օրենքին, դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջներին և ուսումնասիրության արդյունքները ներկայացնում է կառավարչի խորհրդին (բացակայության դեպքում՝ կառավարչի տնօրենին):

Գլուխ 7. Տեղեկությունների պահպանումը

33. Հաճախորդի (լիազորված անձի) հետ գործարք կատարելիս կամ գործարար հարաբերություն հաստատելիս Կառավարիչը նրանից պահանջում է Կանոնակարգով սահմանված բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
34. Կանոնակարգով նախատեսված տեղեկատվությունը պետք է հաշվառվի: Հաշվառումն իրականացվում է Ներքին դիտարկումների աշխատակցի կողմից էլեկտրոնային եղանակով՝ գրառելով բոլոր այն փաստաթղթերը, որոնք ստացվել են Հաճախորդից (լիազորված անձից) նրա հետ գործարար հարաբերություն հաստատելու կամ նրա համար գործարք կատարելու ժամանակ:
35. Սույն գլխով նախատեսված տեղեկատվության թարմացումը կատարվում է հիմք ընդունելով Հաճախորդի կամ գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկի դասը:
36. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակում հավաքված տեղեկությունների (բացառությամբ հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների, որոնք թարմացվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ) թարմացումը կատարվում է հետևյալ պարբերականությամբ.
 - 1) տարին մեկ անգամ՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,
 - 2) վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում,
 - 3) երեք ամիսը մեկ անգամ՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում,
 - 4) երկու տարին մեկ անգամ՝ ցածր ռիսկի դեպքում:
37. Հաշվառման և պահպանման են ենթակա՝
 - 1) Հաճախորդի նույնականացման տվյալները, այդ թվում՝ հաշվեհամարի և հաշվի շարժի վերաբերյալ տվյալները,
 - 2) գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմանների վերաբերյալ տվյալները, որոնք հնարավորություն կտան վերականգնելու գործարքի (գործարար հարաբերության) իրական պատկերը,
 - 3) կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև հաշվետվության հիմքում ընկած տեղեկություններն ու հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ հարցի քննարկումների արձանագրությունները,

- 4) կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ այն տվյալներն ու ենթադրությունները, որոնց հետ կապված՝ Լիագոր մարմնին չի ներկայացվել կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն,
 - 5) Օրենքին, դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջներին Ֆոնդի գործունեության համապատասխանության ուսումնասիրության արդյունքները,
 - 6) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով կազմակերպված ուսուցումների նյութերը, դրանց մասնակցած աշխատակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը:
38. Կանոնակարգի 37-րդ կետով սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պետք է պահպանվեն գործարար հարաբերության ավարտից կամ գործարքի կատարումից հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար ժամկետով:

Գլուխ 8. Աշխատակիցների ուսուցում

39. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործառույթներ իրականացնող աշխատակիցների համար պարբերաբար կազմակերպվում են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով ուսուցումներ:
40. Դասընթացների իրականացման ժամանակացույցը և թեմաները կազմվում են՝ հիմք ընդունելով Կանոնակարգի 36-րդ կետի համաձայն կատարված ուսումնասիրության արդյունքները: